ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիան, որպես կենսաբանության ուսուցման ձև և դրա կազմակերպման մեթոդիկան

Կատարող՝ Նազելի Արզումանյան

Ղեկավար՝ Նարինե Կուրեղյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն

Էքսկուրսիայի դերն ու նշանակությունը, ուսումնական էքսկուրսիան, առանձնահատկությունները

Էքսկուրսիայի տեսակները և կազմակերպումը

Էքսկուրսիաների կազմակերպումն ու արդյունավետությունը կենսաբանության դասաժամերին

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Դպրոցը համարվում է աշակերտների դաստիարակության, կրթության զարգացման հիմնաքարը: ՈՒսումնադաստիարակչական աշխատանքն անհնար է առանց դրա հստակ կազմակերպման:Մեր օրերի աշակերտները բավականին տեղեկացված գալիս են դպրոց, և ուսուցչի խնդիրն է դասը ավելի յուրահատուկ,նորովի,հետաքրքիր և բովանդակալից դարձնել: Էքսկուրսիան ուսուցման ձև է,որն ուսուցչին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը: Այս ամենը նպաստում է երեխաների աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի շրջապատը, ամրապնդում են նրանց գիտակցական կարգապահությունը, սեր ու հարգանք են արթնացնում դեպի բնությունը, հոգատար վերաբերմունք են դաստիարակում մեր հայրենիքի, հայրենի բնության և պատմամշակութային կոթողների նկատմամբ:

Էքսկուրսիան ուսուցման պրոցեսում օգտագործվող մեթոդներից մեկն է, որի միջոցով աշակերտներն ամրապնդում են իրենց անցած տեսական գիտելիքները կամ ավելի լավ են նախապատրաստվում նոր նյութն ուսումնասիրելու,ծանոթանում հայրենի բնությանը, մոտիկից տեսնում յուրաքանչյուր կենդանի օբյեկտը, իրն ու առարկան, հարստացնում գիտելիքների պաշարը և ընդլայնում մտահորիզոնը:Էքսկուրսիաների ընթացքում աշակերտները դառնում են ավելի միասնական,ձևավորվում է առողջ կոլեկտիվ,կարողանում են աշխատել խմբերով:

Էքսկուրսիայի դերն ու նշանակությունը. ուսումնական էքսկուրսիա, առանձնահատկությունները

Մարդու դաստիարակության, դրսևորման, զարգացման գործում կարևոր տեղ է զբաղեցնում կրթօջախը, որը սերտորեն փոխկապակցված է ծնող-հասարակություն կապի հետ: Ցանկացած կրթօջախում կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, որոնցից է նաև էքսկուրսիան:

Ուսումնական էքսկուրսիաները ուսուցման կազմակերպման լավագույն ձևերից են: Էքսկուրսիայի ընթացքում կիրառվում են ուսուցման բացատրական-ցուցադրական, զրույցի, գործնական և այլ մեթոդներ, հետևաբար ուսումնական էքսկուրսիան ուսուցման կազմակերպման ձև է: Ուսումնական էքսկուրսիաները հնարավորություն են ընձեռնում աշակերտներին երևույթները, առարկաները տեսնել բնական վիճակում:Կարողանում են դիտարկել,համեմատել,կապ հաստատել երևույթների միևչ,գտնել անհրաժեշտ առարկաներ,ձեռք բերել ինքնուրույն բնագիտական աշխատանքի հմտություններ՝բնության տարրական ուսումնասիրության հմտություններ:

Յուրաքանչյուր էքսկուրսիա պահանջում է պլանի մանրակրկիտ պատրաստում : Էքսկուրսիային նախորդող դասին անհրաժեշտ կապ է հաստատվում ուսումնասիրված թեմայի բովանդակության հետ, դրվում են հարցեր որոնք հնարավոր է լուծել միայն էքսկուրսիաների ժամանակ, բաշխվում են դիտումների և հավաքների առաջադրանքներ:

Էքսկուրսիաներն ըստ բնույթի



Նախորդող: Ծառայում են մեկ նպատակի համար. մինչև ուսումնական նյութի ուսումնասիրությունը աշակերտներին ծանոթացնել այն առարկաներին, օբյեկտներին, որոնց շուրջ կառուցված է առաջիկայում անցնելիք նյութը:

Էքսկուրսիա ուսուցանվող նյութից առաջ

Ուղեկցող: Ուղեկցող էքսկուրսիաները կազմակերպվում են ուսումնասիրվող նյութին զուգընթաց՝ նյութն ավելի լավ ընկալելու, հասկանալի դարձնելու, իմաստավորելու նպատակով:

Հանրագումարային: Հանրագումարային էքսկուրսիաները կազմակերպվում են տվյալ դասընթացի ավարտից հետո: Վերոնշյալ բնույթի բոլոր էքսկուրսիաները փոխկապակցված են, որոնց նպատակն է զարգացնել և ձևավորել աշակերտների կրթական, դաստիարակչական, հայրենասիրական կարողությունները:

Էքսկուրսիաների միջոցով մենք զարգացնում ենք աշակերտների դիտողականությունը, ճանաչողական հետաքրքրությունները: Դաս-էքսկուրսիաները, որոնք կազմակերպվում են դրսում, ընթանում են յուրահատուկ ձևով: Փոխվում է դասի տեղը և անցկացման ձևը, աշակերտներն ավելի են ակտիվանում, մեծանում է հետաքրքրությունը:

Էքսկուրսիաների տեսակները և կազմակերպումը



Եթե դասագրքի նյութը համառոտ է և դժվար է յուրացվում, ցանկալի է կազմակերպել էքսկուրսիաներ ինչպես դասասենյակում (տեսադասերի միջոցով), այնպես էլ դասասենյակից դուրս:

Անցածի կրկնության կամ ամփոփման նպատակ հետապնդող էքսկուրսիաներն անց են կացվում այլ ձևով. թեմաների ուսումնասիրությունից հետո: Այսպիսի ամփոփումից հետո աշակերտների հիշողության մեջ թարմացվում է անցածը և դաս-էքսկուսրիան ավելի օգտակար և արդյունավետ է ստացվում:

Օրինակ՝ եթե նյութը դասագրքում շատ համառոտ է տրված, պետք է այդ նյութի ուսումնասիրումը կապել էքսկուրսիայի հետ: Այս դեպքում շատ օգտակար կլինի էքսկուրսիան անցկացնել նյութի նախնական ուսումնասիրությունից հետո, որպեսզի էքսկուրսիայի ընթացքում աշակերտները կոնկրետ կերպով տեսնեն այն, ինչ անցել է, համոզվեն իրենց անցածի ճշտության մեջ, դասարանում ստացած տեսական գիտելիքները համադրեն բնության մեջ տեսածի հետ:

Էքսկուրսիաների կազմակերպումն ու արդյունավետությունը կենսաբանության դասաժամերին

Էքսկուրսիան կենսաբանության դասընթացի պրոցեսում օգտագործվող մեթոդներից մեկն է, որի միջոցով աշակերտներն ամրապնդում են իրենց անցած տեսական գիտելիքները, ծանոթանումիայրենի բնությանը, մոտիկից տեսնում յուրաքանչյուր կենդանի օբյեկտը, կարողանում անցկացնել համեմատություն, ուսումնասիրել տարբեր կենդանի օրգանիզմների կառուցվածքը, զարգացման փուլերը, հարստացնում գիտելիքների պաշարը և ընդլայնում մտահորիզոնը: Որոշ ուսումնասիրվող օբյեկտների ուսումնասիրությունը շարունակել լաբորատորիաներում, կատարել գործնական և հետազոտական աշխատանքներ:

Կենսաբանություն ուսումնասիրելիս նպատակահարմար է աշակերտներին էքսկուրսիա տանել երկրաբանական թանգարան, որտեղ կան տարբեր դարաշրջանների բրածո օրգանիզմների քանդակներ, դրոշմվածքներ, վերակերտած կմախքներ: Ընթացիկ էքսկուրսիաների համար լավագույն վայրեր են գիտահետազոտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում եղած ցուցահանդեսները կամ թանգարանները:

Էքսկուրսիա դեպի ԵՊՀ –ի կենսաբանության ֆակուլտետ

FACULTY OF BIOLOGY
Yerevan State University

Եզրակացություն

1. Ուսումնական էքսկուրսիաները հնարավորություն են տալիս դասագրքերում առկա նյութերը ավելի հեշտ ընկալել և ստացած տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

2. Էքսկուրսիաները աշակերտների մոտ բարձրացնում են ինքնուրույնությունը, նրանք դառնում են ավելի կազմակերպված, կարողանում են աշխատել խմբերով և ձևավորվում է առողջ կոլեկտիվ:

3.Աշակերտների մոտ առաջանում է սեր դեպի շրջակա միջավայրը, դառնում են ավելի հոգատար բնության նկատմամբ:

4. Բարձրանում է հետաքրքրությունը բնագիտական առարկաների նկատմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Մանկավարժություն, Մանկավարժ, Ե., 2005, 454 էջ
2. Ասատրյան Լ. և այլք, Մանկավարժություն: Ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի համար, Ե., 2017թ., 336 էջ
3. Ասատրյան Լ., Կարապետյան Ն., <<Ես և շրջակա աշխարհը>> ինտեգրված դասընթացի դասավանդման մեթոդիկա, Արտագերս, Ե., 2016, 250 էջ
4. Գյուլամիրյան Ֆ.Հ., Խոսքի զարգացում, Զանգակ-97, Ե., 2014, 288 էջ
5. Մանկավարժական այլընտրանքային տեխնոլոգիաների կիրառումը կենսաբանության դասերին, Ալ. Ներկարարյան, Երևան 2015